## Բանկի ղեկավարության հայտարարությունը

Բանկի ղեկավարությունը պատասխանատու է բանկի ֆինանսական վիճակը (բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար: Այդ կապակցությամբ բանկի ղեկավարությունը պատասխանատու է՝

- հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, խորհրդի կողմից հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,
- հիմնավորված գնահատումներ և հաշվարկներ կատարելու համար,
- հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,
- Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների պահպանման համար,
- ֆինանսական հաշվետվությունները անընդհատության սկզբունքի հիման վրա պատրաստելու համար, քանի դեռ հանգամանքներն այլ կերպ չեն թելադրում,
- ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանող արդյունավետ և հուսալի ներքին հսկողության համակարգի մշակման, ներդրման և գործունեության ապահովման, իսկ չհամապատասխանելու դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից այդ թերությունների բացահայտման համար,
- Բանկի ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, ՀՀ օրենսդրությանը համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրման համար,
- Բանկի ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ իր իրավասությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու համար:

Յու. Գուսև
Գլխավոր տնօրեն –
Տնօրինության նախագահ

Արշակ Ավետիսյան
Գլխավոր հաշվապահ